ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«01» նոյեմբերի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Կ.Բադալյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի նորընտիր ավագանու թվով 32 (երեսուներկու) անդամներ՝

Վ.Սամսոնյանը, Հ.Սուլթանյանը, Լ.Սանոյանը, Մ.Սահակյանը, Ա.Հովհաննիսյանը, Տ.Հովհաննիսյանը, Թ.Համբարձումյանը, Ն.Պողոսյանը, Գ.Պասկևիչյանը, Ս.Հովհաննիսյանը, Ռ.Անդրիասյանը, Ս.Առաքելյանը, Ա.Բաղդասարյանը, Ա.Բեյբուտյանը, Ա.Պապիկյանը, Հ.Նիկողասյանը, Ք.Հարությունյանը, Ն.Ղազարյանը, Գ.Թաթարյանը, Զ.Միքայելյանը, Ե.Խանամիրյանը, Շ.Արամյանը, Լ.Մուրադյանը, Վ.Հակոբյանը, Կ.Սոսյանը, Ս.Ադամյանը, Ն.Խաչատրյանը, Ն.Միրզոյանը, Հ.Մարգարյանը, Կ.Մալխասյանը, Կ.Ասատրյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, առաջին տեղակալը, խորհրդականները, օնականները, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր, պետի տեղակալներ և աշխատակիցներ:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է) և մի խումբ քաղաքացիներ:

Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Մարգարյանը հայտարարեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի մինչև համայնքի ղեկավար ընտրվելը նիստը վարում է Գյումրի համայնքի նորընտիր ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամ Արուսյակ Հովհաննիսյանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 31 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 24-ի N 34-Ա որոշումը՝ Ա.Հովհաննիսյանը (այսուհետ՝ նիստը վարող) հայտարարեց, որ Գյումրի համայնքի ավագանին ընտրվել է և մանդատները բաշխվել են հետևյալ կերպ.

«Բալասանյան դաշինք» սոցիալական կուսակցություն - 14 մանդատ,
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - 11 մանդատ,
«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն - 4 մանդատ,
Հայաստանի Հանրապետական կուսակցություն - 2 մանդատ,
«Ապրելու երկիր» կուսակցություն - 2 մանդատ:

Հայաստանի Հանրապետության թիվ 31 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 28-ի N 1 արձանագրության համաձայն՝ նիստը վարողը ներկայացրեց ավագանու անդամներին.

«Բալասանյան դաշինք» սոցիալական կուսակցության ընտրական ցուցակից

1) **Սամսոնյան Վարդգես Մելսիկի,**
2) **Սուլթանյան Հայկ Գարեգինի,**
3) **Սանոյան Լուսինե Ռուբիկի,**
4) **Սահակյան Մխիթար Գուրգենի,**
5) **Հունանյան Վահան Նիկոլի,**
6) **Հովհաննիսյան Արուսյակ Ժորժիկի,**
7) **Հովհաննիսյան Տիգրան Համազասպի,**
8) **Համբարձումյան Թորգոմ Սամվելի,**
9) **Պողոսյան Նաիրա Հենրիկի,**
10) **Պասկևիչյան Գևորգ Վոլոդյայի,**
11) **Վարաժյան Խաժակ Մուշեղի,**
12) **Հովհաննիսյան Սոնա Սոսի,**
13) **Անդրիասյան Ռոբերտ Մկրտչի,**
14) **Առաքելյան Սոնա Սամվելի:**

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից

1) **Բաղդասարյան Արման Հրաչի,**
2) **Բեյբուտյան Աստղիկ Գագիկի,**
3) **Պապիկյան Արթուր Ռուդիկի,**
4) **Նիկողասյան Հարություն Հմայակի,**
5) **Հարությունյան Քնարիկ Համլետի,**
6) **Ղազարյան Նիկոլայ Գեորգիի,**
7) **Թաթարյան Գագիկ Ռազմիկի,**
8) **Միքայելյան Զոյա Վարդանի,**
9) **Խանամիրյան Երվանդ Սամվելի,**
10) **Արամյան Շավարշ Արամի,**
11) **Մուրադյան Լիլիթ Նորիկի:**

«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության ընտրական ցուցակից

12) **Հակոբյան Վարդևան Սամվելի,**
13) **Սոսյան Կարեն Վարդգեսի,**
14) **Ադամյան Սվետլանա Միշայի,**
15) **Խաչատրյան Նարինե Լևոնի:**

Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակից

1) Միրզոյան Նարեկ Լյովայի,
2) Մարգարյան Հասմիկ Անդրանիկի,

«Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակից

1) **Մալխասյան Կարեն Ծառուկի,**
2) **Ասատրյան Կալիպսե Հայկի**:

Մինչև օրակարգի հարցերի քննարկումը նիստը վարողը տեղեկացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ավագանու խմբակցությունները ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան. ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում:

Այսպիսով Գյումրի համայնքի ավագանու կազմում գործելու են թվով 5 խմբակցություններ՝

1. **Բալասանյան դաշինք** խմբակցություն
2. **Քաղաքացիական պայմանագիր** խմբակցություն
3. **Զարթոնք** խմբակցություն
4. **Հայաստանի Հանրապետական** խմբակցություն
5. **Ապրելու երկիր** խմբակցություն

Նիստը վարողը տեղեկացրեց նաև, որ ավագանու առաջիկա նիստում հրապարակելու համար խմբակցությունները համայնքի ղեկավարին պետք է գրավոր ներկայացնեն իենց կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի, քարտուղարի անունները և ազգանունները:

Նիստը վարողը ներկայացրեց Գյումրի համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստի օրակարգը, որը համաձայն Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 94-րդ կետի՝ ընդգրկում է հետևյալ հարցերը.

1. Ժամանակվոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
2. Համայնքի ղեկավարի ընտրություն:
3. Համայնքի ղեկավարի երդման արարողության հետ կապված կազմակերպչական հարցեր:
4. Հանձնաժողովների կազմավորում:
5. Հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների առաջադրում:
6. Ավագանու հերթական նիստի գումարման օրվա սահմանում:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԱՀՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Գյումրի համայնքի ավագանու խմբակցությունները հայտերի միջոցով ներկայացրեցին մեկական թեկնածու՝ ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը ձևավորելու համար:

Նիստը վարողը ընթերցեց ներկայացված առաջարկությունները և հարցը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 32
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ստեղծել ավագանու առաջին նստաշրջանի ավագանու հինգ անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):
2. Հաստատել հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝

1) Հայկ Սուլթանյան - «**Բալասանյան դաշինք**» խմբակցություն,
2) Լիլիթ Մուրադյան - «**Քաղաքացիական պայմանագիր**» խմբակցություն,
3) Սվետլանա Ադամյան- «**Զարթոնք**» խմբակցություն,
4) Հասմիկ Մարգարյան- **Հայաստանի Հանրապետական** խմբակցություն,
5) Կալիպսե Ասատրյան- «**Ապրելու երկիր**» խմբակցություն:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Համաձայն «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի՝ նիստը վարողը ներկայացրեց համայնքի ղեկավարի ընտրության անցկացման կարգը, ինչից հետո յուրաքանչյուր խմբակցությանը հնարավորություն տրվեց ներկայացնելու Գյումրի համայնքի ղեկավարի իր խմբակցության թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը կամ իր խմբակցության անունից հայտարարելու համայնքի ղեկավարի թեկնածու չառաջադրելու մասին:

Առաջադրվեց Գյումրի համայնքի ղեկավարի մեկ թեկնածու «**Բալասանյան դաշինք**» խմբակցության կողմից՝ Վարդգես Մելսիկի Սամսոնյանը:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավարի թեկնածու Վարդգես Սամսոնյանը, որից հետո նիստն ընդմիջվեց 30 րոպեով և ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովին ժամանակ տրամադրվեց Գյումրի համայնքի ավագանու 2021թ. նոյեմբերի 1-ի համայնքի ղեկավարի ընտրության բաց քվեարկության անցկացման ժամկետը, տեղը, կարգը և քվեաթերթիկի նմուշը սահմանելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի անդամ Հայկ Սուլթանյանը հրապարակեց քվեարկության արդյունքների վերաբերյալ հանձնաժողովի արձանագրությունը:

կողմ – 24
դեմ – 8

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար ընտրել Վարդգես Մելսիկի Սամսոնյանին:

Որոշումն ընդունվեց

Ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանը (այսուհետ՝ նիստը վարող) ստանձնեց նիստի վարման նախագահությունը:

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Բադալյանը տեղեկացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված երդմամբ և հայտարարեց, որ Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանի երդման արարողությունը տեղի կունենա Գյումրու համյնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում 2021թ. նոյեմբերի 4-ին ժամը 12:00- ին օրենքի ուժով հրավիրված ավագանու երդմնակալության նիստին:

Ավագանու անդամների կողմից վերը նշված տեղեկատվությունն ընդունվեց **ի գիտություն**:

ԼՍԵՑԻՆ.

4. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ

(Զեկուցող՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ)

Համաձայն ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի և Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 45-րդ կետի պահանջների՝ Գյումրի համայնքի ավագանին ունի թվով 4 մշտական գործող հանձնաժողով.

1. ***Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի հանձնաժողով***,
2. ***Մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի հանձնաժողով***,
3. ***Քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողով***,
4. ***Իրավական հարցերի հանձնաժողով***:

Համայնքի ղեկավարը և նրա առաջին տեղակալը հանձնաժողովների կազմում չեն ընդգրկվում :

Ավագանու անդամների կողմից վերը նշված տեղեկատվությունն **ընդունվեց ի գիտություն**:

ԼՍԵՑԻՆ.

5.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

(Զեկուցող՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ)

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Քնարիկ Հարությունյանը առաջարկեց հարցը քննարկել ավագանու առաջիկա նիստի ընթացքում:

Հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների առաջադրման մասին հարցն օրակարգից հանելու և այն ավագանու առաջիկա նիստի ընթացքում քննարկելու առաջարկությունը դնում եմ քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 8
ձեռնպահ – 1

5-րդ հարցը հանվեց օրակարգից:

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ)

Նիստը վարողն առաջարկեց Գյումրի համայնքի ավագանու հերթական նիստը գումարել 2021 թ. դեկտեմբերի 03-ին ժամը 12:00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 26
դեմ – 0
ձեռնպահ – 0

«Զարթոնք» և «Ապրելու երկիր» խբակցությունները չմասնակցեցին քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 03-ը՝ ժամը՝ 12:00:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Վ.Սամսոնյան _____

Հ.Սուլթանյան _____

Լ. Սանոյան _____

Մ. Սահակյան _____

Ա.Հովհաննիսյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Թ.Համբարձումյան _____

Ն. Պողոսյան _____

Գ.Պասկևիչյան _____

Ս. Հովհաննիսյան _____

Խ. Վարաժյան _____

Ռ.Անդրիասյան _____

Ս.Առաքելյան _____

Ա. Բաղդասարյան _____

Ա. Բեյբուտյան _____

Ա.Պապիկյան _____

Հ. Նիկողասյան _____

Ք. Հարությունյան _____

Ն. Ղազարյան _____

Գ. Թաթարյան _____

Զ. Միքայելյան _____

Ե. Խանամիրյան _____

Շ.Արամյան _____

Լ. Մուրադյան _____

Վ.Հակոբյան _____

Կ.Սոսյան _____

Ս. Ադամյան _____

Ն. Խաչատրյան _____

Ն. Միրզոյան _____

Հ. Մարգարյան _____

Կ.Մալխասյան _____

Կ.Ասատրյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ք. Գյումրի
«01» նոյեմբերի 2021 թվական